ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Իջևան 22. սեպտեմբեր. 2022թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Հայկարամի Մակարյանի, որը գործում է ԵՊՀ ԻՄ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԿԳՄՍՆ «Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աննա Էդիկի Ավալյանի, որը գործում է Քոլեջի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին Համագործակցության մասին սույն Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն Հուշագրի առարկան հանդիսանում է Կողմերի միջև գիտակրթական և հանրամշակութային փոխգործակցության ձևավորմանն ու հետագա խորացմանն ուղղված հարաբերությունները:

2. Սույն Հուշագրից բխող պայմաններով և կարգով Կողմերը պարտավորվում են սերտ համագործակցության դաշտ ստեղծել ԵՊՀ ԻՄ-ի և Քոլեջի միջև, խրախուսել Քոլեջի ուսանողների հետագա ուսումնառության կազմակերպումը ԵՊՀ ԻՄ-ում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը Հուշավորվում են մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը և գործակցել հետևյալ ուղղություններով.

ա/ դասախոսների վերապատրաստումների անցկացում,

բ/երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող, ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացման, մասնագիտական գրականության, մեթոդական ուղեցույցների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և լուծում,

գ/գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում,

դ/սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործում,

ե/համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության հարցում և ստացում,

զ/երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպչական բնույթի այլ ուղղություններով համագործակցություն:

2. Քոլեջը համաձայնվում է.

Անցկացնել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների ուսումնական, արտադրական, նախաավարտական և գիտաարտադրական պրակտիկաները՝ ուղեգրերում նշված ժամկետներում,

ա/Քոլեջի կողմից պրակտիկայի ղեկավարման համար նշանակել համապատասխան որակավորմամբ մասնագետ,

բ/ուսանողներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի և Քոլեջի ներքին կարգապահական կանոններին՝ ապահովելով պրակտիկայի անցկացման անվտանգ պայմաններ,

գ/ պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի գնահատել ըստ ԵՊՀ ԻՄ-ի կողմից ներկայացվող պրակտիկայի գնահատման թերթիկի:

3. ԵՊՀ ԻՄ-ը համաձայնվում է.

ա/ Քոլեջի ուսանողների համար կազմակերպել.

1) տեղեկատվական օրեր ԵՊՀ ԻՄ-ում,
2)դասընթացներ և ակնարկային դասախոսություններ՝ պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ,
3) մասնագիտական կողմնորոշման դասընթացներ,
4) շրջայց ԵՊՀ ԻՄ-ում,
5)խորհրդատվություն և նախապատրաստական դասընթացներ՝ Քոլեջի շրջանավարտ- ների համար:

բ/Քոլեջի ուսանողներին և կարիերայի պատասխանատուներին ներգրավել ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներին,

գ/Քոլեջի ուսանողներին ծանոթացնել ԵՊՀ ԻՄ-ում ուսումնառվող մասնագիտություններին,

դ/ հյուրընկալել Քոլեջի ուսանողներին և կազմակերպել հանդիպումներ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների հետ,

ե/կազմակերպել Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտություններով՝ համաձայն ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 8-ի թիվ 752-Ն որոշմամբ հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու մասին» որոշման:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի և այլ անհրաժեշտ գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն Սույն Հուշագրի շրջանակում առանձին փաստաթղթեր կազմելու և հաստատելու միջոցով:

2. Կողմերը Հուշավորվում են սույն Հուշագրում նշված նպատակներին հասնելու համար գործադրել իրենց առավելագույն ջանքերը, այդ թվում՝ տեղեկատվության, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակում, այլ մարմինների հետ համագործակցություն:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից և գործում է անորոշ ժամկետով:

2. Սույն Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Հուշագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որոնք կհամարվեն Սույն Հուշագրի անբաժանելի մասը:

3. Սույն Հուշագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ԵՊՀ ԻՄ	ՔՈԼԵՋ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ	ՀՀ ԿԳՄՄՆ «Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ
ՀՎՀՀ՝ 01506928	ՀՎՀՀ՝ 07621953
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան	հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ,
Ռիսանողական 3	ք.Բերդ, Թեհլերյան 43
Հեռ.՝ (+374) 263 40050, (+374) 263 40035	հեռ.՝ (0267) 2-13-32, (+374) 94 95 25 52
Տնօրենի պաշտոնակատար՝	Տնօրեն՝
Անուշավան Մակարյան	Աննա Ավալյան
----------	----------
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.